Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11003/24-ԿՑ պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 4

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի տրամադրում և սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» |
| Դրամաշնորհի N | Լոտ 6. Կոտայքի մարզ– ցերեկային կենտրոն |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.10.2024-31.12.2024թթ. |
| Ներկայացման օր | 16.12.2024 |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Հասմիկ Մանուկյան<br>Թիմ լիդեր |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- լվացքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրման** շրջանակներում սոցիալական աշխատողը անհատական և խմբային աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրել 44 շահառուի, իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում: Շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականցվել է 1 դեպքի վարում՝ նոր անձնագրի ձեռք բերում, 23 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
- **Իրավաբանական խորհրդատվության** շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ:
- **Կազմակերպվել է շահառուների ժամանցը՝** մանր եւ խոշոր մոտորիկայի, ուշադրության կենտրոնացման, հիշողության զարգացմանն ուղղված խաղերի, ակտիվացնող պարերի, կապերի ընդլայնման, հյուրերի ընդունելության, հեռուստադիտումների, ընթերցանության և դրանց համապատասխան քննարկումների իրականացման միջոցով:
  Կենտրոնում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 4 խմբակ՝ առողջ ապրելակերպ և առողջական ֆիզկուլտուրա, զարգացնող խաղեր, տիկնիկագործություն, հոգեւոր խմբակ, որին մասնակցել է 44 շահառու: Կազմակերպվել է թվով 11 մշակութային միջոցառում, որոնց մասնակցել է 44 շահառու: Իրականացված միջոցառումներն են՝ «Տարեցների միջազգային օր», «Տրակտատ թաշկինակի մասին» ներկայացման դիտում, ընթերցանության օր՝ «Արցախյան հեքիաթներ», «Աշնանային ճամբար» տարեցների համար, «Ուշ լինի, նուշ լինի» ներկայացման դիտում, մասնակցություն «Հայ դյուցազնավեպի քոչարյան պատկերապատումը» խորագրով ցուցահանդեսին, մասնակցություն «Ծիծաղող աստղեր» ՀԿ-ի աճպարար Վենսենտ Կալինի ներկայացմանը, այց Ազգային ժողով, «Նոր տարի»:
- **Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային/արտթերապիայի շրջանակներում** իրականացվել է արվեստի, խաղային, հոգեբանական, ինտելեկտուալ 41 թերապեվտիկ պարապմունքներ, որոնց մասնակցել է 23 շահառու:

- **Սննդի տրամադրման շրջանակներում** յուրաքանչյուր օր կենտրոնում սննդային 2 ընդմիջում է կազմակերպվել:
- **Լվացքի տրամադրման ծառայությունից** օգտվել է 1 շահառու :
- **Վարսահարդարման ծառայությունից** օգտվել է 9 շահառու :
- **Ակնաբուժական ծառայությունից** օգտվել է 19 շահառու:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.
Միջոցառումներ նվիրված տարեցների միջազգային օրվան, այց Հրազդանի դրամատիկական թատրոն, Երևանի Հ.Պարոնյանի անվան երաժշտական թատրոն, այց ցուցահանդես, այց ՀՀ Ազգային ժողով, «Ծիծաղող աստղեր» ՀԿ-ի աճպարար Վինսենտ Կալիի այց ՑԿ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://shorturl.at/vvkBo, https://shorturl.at/wPxF4 , https://shorturl.at/9JNsy, https://shorturl.at/ypyeR, https://shorturl.at/ntl7A, https://goo.su/8SRY2, https://goo.su/JTr1pa, https://goo.su/OGQRM, https://goo.su/UIve):
Ինտելեկտուալ խաղ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://goo.su/GGPslmd )

Սեղանի խաղ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://shorturl.at/tpbm6 )

Առողջ ապրելակերպ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://shorturl.at/Qa46r )

Հոգեբանական խաղ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://shorturl.at/rweAa , https://shorturl.at/c18NZ )

Այլ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://shorturl.at/rUCFG )

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**
Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:
**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Ծրագրի նպատակին հասնելու համար աշխատակազմի հմտությունները զարգացնելու, աշխատանքները արդյունավետ կազմակերպելու նպատակով ցերեկային կենտրոնի պատասխանատուի կողմից կազմակերպվել են թիմային քննարկումներ և դեպքերի ուսումնասիրություններ:
Հրազդանի Ցերեկային կենտրոնի պատասխանատուն մասնակցել է ՄԱԾՏԿ-ի գործող 2 համակարգող խորհրդի նիստերին եւ հոգաբարձուների 2 նիստերին:
Հրազդանի սոցիալական աշխատողը մասնակցել է «Հայկական Կարիտաս»-ի կողմից կազմակերպված «Տարեցների հետ տարվող սոցիալական խնամքը» թեմայով օնլայն դասընթացին:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ցերեկային խնամքի կենտրոնի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| h/h | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 43/44 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 29 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 2 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 2 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 2 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 42 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 44 |
| 3. | Կարիքի գնահատում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 44 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 23 |
| 5. | Խմբակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 44 |
| 5.1 | Առողջ ապրելակերպ և առողջական ֆիզկուլտուրա | 29 |
| 5.2 | Զարգացնող խաղեր | 16 |
| 5.3 | Տիկնիկագործություն | 12 |
| 5.4 | Հոգեւոր խմբակ | 18 |
| 6. | Մշակութային մոջոցառումների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 34 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | 32 |
| 7. | Այլ ծառայություն (նշել) լվացքի ծառայություն<br>վարսահարդարում | 1<br>9 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «16»12.2024թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)